

«27» դեկտեմբեր 2014թ.

No 3131 - Ա

ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
2015 - 2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1913-Ն որոշման 2-րդ հավելվածի 11-րդ կետի 1-ին ենթակետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետով և Հայաստանի Հանրապետությունում վիրուսային հեպատիտների համաճարակաբանական հսկողության համակարգի կատարելագործման նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ «Վիրուսային հեպատիտների վերահսկման և կանխարգելման 2015 – 2020 թվականների նպատակային ծրագիրը»՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել՝ «Վիրուսային հեպատիտների վերահսկման և կանխարգելման 2015 – 2020 թվականների նպատակային ծրագրի» միջոցառումների ցանկը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Սերգեյ Խաչատրյանին:

Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ 2015-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Վիրուսային հեպատիտները առողջապահության գերակա խնդիրներից են և բնորոշվում են լայն տարածվածությամբ, համաճարակային ներուժով, ինչպես նաև բնակչության առողջությանը և տնտեսությանը հասցրած հսկայական վնասով: Հեպատիտներն այսօր լյարդի ախտահարումով պայմանավորված մահվան հիմնական պատճառներից են:

2. Ներկայում հայտնի են հեպատիտներ առաջացնող ավելի քան 8 վիրուսներ: Առողջապահության համար առավել լուրջ հիմնախնդիր են Բ և Ց հեպատիտները՝ հիվանդացության, քրոնիզացման հակման, մահացության բարձր մակարդակի, հետևանքների, ինչպես նաև բուժման թանկարժեքության պատճառով: Առողջապահության համաշխարհային կազմակերպության գնահատմամբ երկրագնդի բնակչության մեկ երրորդը ունեն հակամարմիններ հեպատիտ Բ-ի վիրուսի հանդեպ, իսկ 350-400 միլիոն անձանց մոտ ախտորոշվել է քրոնիկ հեպատիտ Բ, ընդ որում , միջինը նրանցից 25 տոկոսը կյանքի ընթացքում մահանում են լյարդի ցիրոզից և հեպատոցելուլյար կարցինոմայից: Շուրջ 200 միլիոն մարդ վարակված է հեպատիտ Ց-ով,ինչը 5 անգամ գերազանցում է մարդու իմունային անբավարարության վիրուսով (այսուհետ՝ ՄԻԱՎ) վարակվածների քանակը, և ամեն տարի հայտնաբեկվում է 3 - 4 միլիոն նոր վարակված անձ:

3. Ամեն տարի շուրջ 1 միլիոն մարդ մահանում է սուր կամ քրոնիկ հեպատիտ Բ-ի հետևանքներից: Աշխարհում լյարդի ցիրոզի առնվազն 60 միլիոն դեպք կապված է քրոնիկ հեպատիտ Բ - ի հետ: Քաղցկեղի առաջացման տեսանկյունից հեպատիտ Բ-ի վիրուսն աշխարհում գրավում է 2 - րդ տեղը՝ ծխելուց հետո: Հարկ է նշել, որ քրոնիկ

հեպատիտների հետևանքով առաջացած լյարդի ցիրոզից և հեպատոցելուլյար կարցինոմայից, Առողջապահության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ) տվյալներով, յուրաքանչյուր տարի աշխարհում մահանում է շուրջ 1-2 միլիոն մարդ, և մոտակա 10-20 տարիների ընթացքում կանխատեսվում է լյարդի հիվանդություններից մահացության աճ 2 անգամ :

4. Հեպատիտ Բ-ի աշխարհագրական տարածման առումով երկրները բաժանվում են 3 գոտու՝ բարձր, միջին և ցածր էնդեմիկության: Երկրագնդի բնակչության 43 տոկոսը ապրում է միջին էնդեմիկության գոտում, որտեղ բնակչության վարակվածությունը կազմում է 20-55 տոկոս, հեպատիտ Բ-ի վիրուսակրությունը՝ 2-7 տոկոս, /Արևելյան և Հարավային Եվրոպա, Ռուսաստան, Հայաստան, Կենտրոնական Ասիա, Ճապոնիա, Մերձավոր Արևելքի երկրներ, Իսրայել, Հյուսիսային Աֆրիկա, Հարավային Ամերիկայի մի շարք երկրներ/: Հայաստանի Հանրապետությունը ևս գտնվում է հեպատիտ Բ-ի առումով միջին էնդեմիկության գոտում: Հեպատիտ Բ-ի դեմ պայքարում զգալի հաջողություն է գրանցել իմունականխարգելումը: Տարիների ընթացքում բոլոր նորածինների և կյանքի առաջին տարում երեխաների հետևողական անընկալունակ շերտի ստեղծումը, մի շարք երկրների թույլ է տվել աստիճանաբար անցնել «ցածր էնդեմիկության» տարածքների շարքը (Թայլանդ, Ինդոնեզիա, Մոնղոլիա, Թայվան, Իտալիա և այլն):

5. Վիրուսային հեպատիտ Ց-ի համաճարակաբանական օրինաչափությունների ուսումնասիրությունը սկսվել է 1989 թվականից: Առաջին սերնդի ախտորոշիչ պատրաստուկներով արյան դոնորների հետազոտության դեպքում կանխվել է հեպատիտ Ց-ի վիրուսով 40 հազար վարակում: Հեպատիտ Ց-ի տարածումն աշխարհում անհավասարաչափ է: Արյան դոնորների հետազոտությունը թույլ է տալիս երկրները բաժանել խմբերի՝ ըստ հեպատիտ Ց-ի վիրուսի հանդեպ (հակա-ՎՀՑ) հակամարմինների հայտնաբերման հաճախականության՝ բարձր (5 տոկոսից բարձր), միջին (1,1-5 տոկոս) և ցածր հաճախականությամբ (0,2-1 տոկոս): Վերջին 10 տարվա ընթացքում հեպատիտ Ց-ի վիրուսի հետ կապված լյարդի հիվանդությունների մակարդակը նկատելիորեն աճել է: Ըստ ԱՀԿ-ի տվյալների, մոտակա 10-20 տարվա ընթացքում կանխատեսվում է լյարդի ցիրոզով և հեպատոցելուլյար կարցինոմայով աճ մոտ 60 տոկոսով: Շատ վարակվածների մոտ հեպատիտ Ց-ի նշանները կարող են չդրսևորվել շուրջ 20-30 տարի, հետևաբար բացահայտման մակարդակը 20 տոկոսից

պակաս է, այդ թվում՝ և զարգացած երկրներում: Համարվում է, որ ԱՄՆ-ում չբացահայտված քրոնիկ հեպատիտ Ց-ով հիվանդների թիվը կազմում է մոտ 2,5 միլիոն, իսկ Եվրամիության երկրներում՝ մոտ 1,8 մլն: Հեպատիտ Ց վիրուսի հետ կապված հիվանդացության գագաթնակետը սպասվում է 2018 թվականին: Հեպատիտ Ց վիրուսով պայմանավորված հիվանդություններից տարեկան մահանում է 250000 մարդ: Զարգացած երկրներում քրոնիկ հեպատիտ Ց-ն հանդիսանում է լյարդի փոխպատվաստման հիմնական պատճառ: Ամբողջ աշխարհում վիրուսային հեպատիտ Ց-ի դեմ պատվաստանյութ դեռևս չկա:

6. Ա և Ե հեպատիտները ներկայում շարունակվում են աշխարհի մի շարք երկրների համար առողջապահական գերակա խնդիր մնալ: Վերջին տարիների ուսումնասիրությունները բացահայտել են հեպատիտ E վիրուսի քրոնիկ ձևեր, մասնավորապես՝ իմունոսեպրեսիվ հիվանդների մոտ(հյուսվածքների, օրգանների տրանսպլանտացիա և այլ դեպքեր): Ապացուցված է հեպատիտ Ե-ի հնարավոր զոոնոզ բնույթը, մասնավորապես ոչ էնդեմիկ տարածքներում:

II. ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏՆԵՐԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

7. Ներկայում վիրուսային հեպատիտների դեմ արդյունավետ պայքարի կազմակերպումն ու իրականացումը շարունակում են մնալ Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի արդիական խնդիրներից:

8. Հայաստանում, համաձայն վարչական վիճակագրության տվյալների, վերջին երկու տասնամյակի ընթացքում արձանագրվում է հեպատիտ Ա-ի հիվանդացության արտահայտված իջեցում: Հեպատիտներով հիվանդացության ընդհանուր կառուցվածքում (մինչև 2010 թվականը) 80 տոկոսը բաժին է ընկնում հեպատիտ Ա-ին: 2011-2013 թվականների ժամանակահատվածում հեպատիտ Ա-ի մասնաբաժինը նվազել է , կազմելով միջինը՝ շուրջ 50 տոկոս: Վերջին երկու տասնամյակի ընթացքում հեպատիտներով հիվանդացածների շրջանում մինչև 14 տարեկան երեխաների տեսակարար կշիռը միջինում կազմել է 65.1 տոկոս: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ հեպատիտ Ա-ի իրական հիվանդացությունը սովորաբար գերազանցում է

արձանագրվածին, քանի որ երեխաների մոտ շատ հաճախ զարգանում են ջնջված, անախտանշան ձևեր, որոնք հայտնաբերվում են շատ հազվադեպ: Հայաստանում վիրուսային հեպատիտ Ա-ի դեմ պատվաստումներն իրականացվում են միայն համաճարակաբանական ցուցումով:

9. Հայաստանում առողջ ազգաբնակչության շրջանում 2006 թվականին իրականացված իմունաբանական հետազոտության արդյունքում հեպատիտ Ե-ի վիրուսի հանդեպ հակամարմինների հայտնաբերման հաճախականությունը կազմել է 2.51 տոկոս:

10. Վերջին տարիներին զգալի նվազում է արձանագրվել հեպատիտ Բ-ով հիվանդացության շարժընթացում: Եթե 1999 թվականին՝ մինչև պատվաստումների ներդրումը, դիտվում է հիվանդացության հավասարաչափ նվազում և՛ մեծահասակ, և՛ մանկական (0-14 տարեկաններ) բնակչության շրջանում՝ մոտ 2.5տոկոսով, ապա պատվաստումների ներդրումից հետո արձանագրվում է հիվանդացության կտրուկ նվազում՝ հատկապես մանկական ազգաբնակչության շրջանում՝ ցուցանիշը 9.8-ից (0-14 տարեկան 100000 երեխայի հաշվարկով) նվազել է 0.3-ի (նվազում մոտ 32 անգամ): Նշվածը ապացուցում է պատվաստումների անհրաժեշտությունը, կարևորությունը և դրանց արդյունավետությունը վիրուսային հեպատիտ Բ-ի կանխարգելման գործում:

11. Հայաստանի Հանրապետությունում 2007-2013 թթվականների ընթացքում, ոչ պաշտոնական տվյալներով, արձանագրվել է հեպատիտ Ց-ի առաջնակի հայտնաբերված 536 դեպք Այդ ժամանակահատվածում 0-14 տարեկան երեխաների շրջանում վիրուսային հեպատիտ Ց-ի դեպքեր չեն արձանագրվել: Նույն տարիներին արձանագրվել է հեպատիտ Բ-ի 554 դեպք: 2007-2013 թվականների ընթացքում 0-14 տարեկանների շրջանում արձանագրվել է հեպատիտ Բ-ի 19 դեպք: 2007-2013 թվականների ընթացքում արձանագրված հեպատիտների վերլուծությունն ըստ տարիքային խմբերի, ցույց է տալիս, որ հեպատիտ Բ-ն և Ց-ն արձանագրվել են հիմնականում 24-49 տարիքային խմբերում: Վիրուսային հեպատիտներով հիվանդացության կառուցվածքում դիտվում է արտաընդերային ճանապարհով փոխանցվող ձևերի մասնաբաժնի աճ:

12. Արտաընդերային ճանապարհով փոխանցվող վիրուսային հեպատիտների կանխարգելման արդյունավետության գնահատման հիմնական ցուցանիշը ռիսկի

քանակակազմի շրջանում հեպատիտ Ց-ի վիրուսի հանդեպ հակամարմինների (հակա-ՀՑՎ) և հեպատիտ Բ-ի վիրուսի (այսուհետ՝ ՀԲՎ) մակերեսային հակաձնի (HBsAg) ու հեպատիտ Բ-ի վիրուսի հանդեպ (հակա-ՀԲՎ) հակամարմինների նկատմամբ արյան լաբորատոր հետազոտություններում ընդգրկվածությունն է: Հայաստանի Հանրապետությունում վիրուսային հեպատիտ Բ-ի նկատմամբ լաբորատոր հետազոտությունները ռիսկի քանակակազմի շրջանում (արյան և դրան փոխարինող նյութերի հետ շփվող անձնակազմի շրջանում ավստրալիական հակաձնակրության (HBsAg) հայտնաբերումը) իրականացվում են ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 27-ի N347-Ն որոշման պահանջների համաձայն, իսկ վիրուսային հեպատիտ Ց-ի նկատմամբ՝ հետազոտությունների գործընթացը դեռևս կանոնակարգման խնդիր ունի:

13. Հեպատիտ Բ-ի և Ց-ի նկատմամբ հետազոտության է ենթարկվում դոնորական արյունը, ՄԻԱՎ վարակվածների արյունը:

14. Հայաստանի Հանրապետությունում վիրուսային հեպատիտների համաճարակաբանական հսկողության համակարգը կարիք ունի միջազգային չափանիշներին համապատասխանեցման:

15. Ելնելով վերոհիշյալից և գիտակցելով վիրուսային հեպատիտների հիվանդացության նվազեցման առողջապահական, սոցիալական և տնտեսական նշանակությունը՝ կարևորվում է Հայաստանի Հանրապետությունում վիրուսային հեպատիտների վերահսկման և կանխարգելման նպատակային ծրագրի ընդունումը՝ միջազգային մոտեցումներին համապատասխան:

III. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

16. Վիրուսային հեպատիտների վերահսկման և կանխարգելման ազգային ծրագրի նպատակը Հայաստանի Հանրապետությունում վիրուսային հեպատիտների հիվանդացության, դրա բարդություններից մահացության նվազեցումն է, արտաընդերային ճանապարհով փոխանցվող վիրուսային հեպատիտների վարակման նոր դեպքերի և քրոնիկ վիրուսային հեպատիտների դեպքերի նվազեցումը:

17. Ծրագրի խնդիրներն են՝

- 1) Վիրուսային հեպատիտների կանխարգելմանն ուղղված ազգային քաղաքականության զարգացում:
- 2) Վիրուսային հեպատիտների կանխարգելման կայուն համակարգի գործունեության ապահովում:
- 3) Վիրուսային հեպատիտների լաբորատոր հսկողության համակարգի կատարելագործում:
- 4) Արտաընդերային ճանապարհով փոխանցվող վիրուսային հեպատիտների վաղ հայտնաբերման գործընթացի զարգացում:
- 5) Վիրուսային հեպատիտների՝ մասնավորապես արտաընդերային ճանապարհով փոխանցվող, կանխարգելման գործընթացում ընդգրկված բուժաշխատողների գիտելիքների շարունակական կատարելագործման ապահովում:
- 6) Վիրուսային հեպատիտների առումով բնակչության բժշկահիգիենիկ կրթության, առողջ ապրելակերպի քարոզչության գործընթացի զարգացում:
- 7) Նպատակային ծրագրի իրականացման գործընթացի մշտադիտարկում (մոնիթորինգ):

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ 2015-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Միջոցառման անվանում	Կատարման ժամկետ	Ակնկալվող արդյունքներ	Կատարող	Ֆինանսավորման աղբյուր
1	2	3	4	5
I ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ				
1. Վիրուսային հեպատիտների կանխարգելման և դրանց դեմ պայքարի միջոցառումների իրականացման աշխատանքների ղեկավարման միասնական համակարգի ձևավորում				
1) Ստեղծել վիրուսային հեպատիտների, մասնավորապես՝ արտաընդերային ճանապարհով փոխանցվող, կանխարգելման մասնագիտական հանձնաժողովներ Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևանում քաղաքում, սահմանել դրանց գործառույթները	2015 թվական	Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում մասնագիտական հանձնաժողովների կողմից	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն Երևանի քաղաքապետարան	Ֆինանսավորում չի պահանջվում

		<p>իրականացվում է վիրուսային հեպատիտների (մասնավորապես՝ արտաընդերային ճանապարհով փոխանցվող) հարցերի համակարգված կառավարում</p>	<p>, Հայաստանի Հանրապետության մարզպետարաններ</p>	
<p>2) Ապահովել համագործակցություն միջազգային և հասարակական կազմակերպությունների ու հիմնադրամների հետ՝ արտաընդերային ճանապարհով փոխանցվող վիրուսային հեպատիտների հարցերի շուրջ , այդ թվում գիտական հետազոտությունների վերաբերյալ</p>	<p>2015-2020 թվականներ</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, համագործակցելով միջազգային և հասարակական կազմակերպությունների ու հիմնադրամների հետ, այդ կազմակերպություններին մասնակից է դարձրել վիրուսային հեպատիտների վերահսկման և կանխարգելմանն ուղղված ծրագրերի իրականացմանը՝ ապահովելով վիրուսային հեպատիտների համաճարակաբանական հսկողության</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>	<p>Պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող գումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից</p>

		համակարգի ինտեգրումը միջազգային գործընթացներին		
3) Ստեղծել վիրուսային հեպատիտ Բ-ի և Ց-ի կանխարգելման հարցերով զբաղվող գիտամասնագիտական խորհուրդ՝ ներգրավելով գիտահետազոտական հիմնարկների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների, (մասնավորապես՝ հեմոդիալիզի բաժանմունքների, ինֆեկցիոն հիվանդանոցների (բաժանմունքների), վիրաբուժական բաժանմունքների վիրաբույժների, մաշկասեռավարակաբաններ, կանանց կոնսուլտացիաների, ընտանեկան բժշիշկների, ծննդատների, մոր և մանկան առողջության պահպանմա ու այլն) մասնագետների	2015 թվական	Վիրուսային հեպատիտ Բ-ի և Ց-ի կանխարգելման հարցերով զբաղվող գիտամասնագիտական խորհուրդն ապահովել է վիրուսային հեպատիտների կանխարգելման և վերհսկողության միջոցառումների իրականացման գիտական մոտեցումների ներդրումը	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Երևանի քաղաքապետարան , Հայաստանի Հանրապետության մարզպետարաններ	Ֆինանսավորում չի պահանջվում
2. Վիրուսային հեպատիտների կանխարգելման ոլորտին վերաբերվող օրենսդրության կատարելագործում				

<p>1) Մշակել և ներդնել «վիրուսային հեպատիտներ Բ-ի, Ց-ի համակցված համաճարակաբանական հսկողություն» սանիտարահամաճարակաբանական կանոնները և նորմերը և համապատասխան մեթոդական ուղեցույցը</p>	<p>2015 թվական</p>	<p>Կանոնակարգված է վիրուսային հեպատիտներ Բ-ի, Ց-ի համակցված համաճարակաբանական հսկողության համակարգի գործունեությունը</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>
--	--------------------	--	--	------------------------------------

3. Վիրուսային հեպատիտների, մասնավորապես՝ արտաընդերային ճանապարհով փոխանցվող, համաճարակաբանական հսկողության համակարգի կատարելագործում

<p>1) Մշակել նպատակային քանակակազմերի շրջանում վիրուսային հեպատիտ Բ-ի և Ց-ի նկատմամբ լաբորատոր հետազոտությունների գործողությունների ծրագիր</p>	<p>2015 թվական</p>	<p>Վիրուսային հեպատիտ Բ-ի և Ց-ի լաբորատոր հետազոտությունների գործողությունների ծրագրի հիման վրա վիրուսային հեպատիտների, մասնավորապես՝ արտաընդերային ճանապարհով փոխանցվող, լաբորատոր հսկողությունը կատարելագործված է</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>
--	--------------------	---	--	------------------------------------

<p>2) Կատարելագործել սուր վիրուսային հեպատիտների համաճարակաբանական հսկողության համակարգը, ինչպես նաև մշակել և ներդնել քրոնիկ հեպատիտների՝ ներառյալ խառը (միքստ) վիրուսային հեպատիտների, չտարբերակված վիրուսային հեպատիտների,</p>	<p>2015-2016 թվականներ</p>	<p>Սուր վիրուսային հեպատիտների, ինչպես նաև քրոնիկ հեպատիտների՝ ներառյալ չտարբերակված և</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>
--	----------------------------	--	--	------------------------------------

<p>յարդի ցիրոզի, յարդի քաղցկեղի, ՄԻԱՎ/հեպատիտ զուգորդված վարակի, համաճարակաբանական հսկողության համակարգ</p>		<p>չդասակարգված վիրուսային հեպատիտների, յարդի քաղցկեղի, ՄԻԱՎ/հեպատիտ զուգորդվող վարակի, համաճարակաբանական հսկողության համակարգը համապատասխանեցված է միջազգային պահանջներին</p>		
<p>3) Մշակել քրոնիկ վիրուսային հեպատիտների դեպքի ստանդարտ սահմանումները</p>	<p>2015 թվական</p>	<p>Քրոնիկ վիրուսային հեպատիտների դեպքի ստանդարտ սահմանումները ներդրված են, քրոնիկ հեպատիտների ախտորոշումն իրականացվում է ստանդարտացված մոտեցումներով</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>
<p>4) Լրամշակել վարչական վիճակագրական ձևերը՝ վիրուսային հեպատիտների մասով</p>	<p>2015 թվական</p>	<p>Լրամշակված վարչական վիճակագրական ձևերը արտացոլում են վիրուսային հեպատիտների իրական տվյալները</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>
<p>5) Բոլոր մակարդակներում, այդ թվում՝ տարածաշրջանային և մարզային իրականացնել վիրուսային հեպատիտների, համաճարակային իրավիճակի ամսական վերլուծություն՝ ըստ</p>	<p>2015-2020 թվականներ</p>	<p>Բոլոր մակարդակներում, վիրուսային հեպատիտների համաճարակային</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>

առանձին պատճառագիտական ձևերի		իրավիճակի ամսական վերլուծության համակարգը ներդրված է, գնահատված են իրականացված աշխատանքները, վեր են հանված բացթողումները և ներկայացված են դրանց շտկման առաջարկությունները		
------------------------------	--	---	--	--

II. ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

4.Կատարելագործել և բարելավել վիրուսային հեպատիտներով պայմանավորված ներհիվանդանոցային վարակների համաճարակաբանական հսկողության համակարգը

<p>1) Կազմակերպել քննարկումներ, խորհրդակցություններ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում վարակի հսկողության հանձնաժողովների հետ՝ այդ կազմակերպություններում արտաընդերային ճանապարհով փոխանցվող վիրուսային հեպատիտների ժամանակին հայտնաբերման, հաղորդման և վարակի հետագա տարածման կանխարգելման, ինչպես նաև հակահամաճարակային համալիր միջոցառումների իրականացման հարցերի շուրջ</p>	<p>2015-2020 թվականներ .</p>	<p>Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում վարակի հսկողության հանձնաժողովների հետ իրականացված են այդ կազմակերպություններում արտաընդերային ճանապարհով փոխանցվող վիրուսային հեպատիտների ժամանակին հայտնաբերման, հաղորդման և վարակի հետագա տարածման կանխարգելման, ինչպես</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն Երևանի քաղաքապետարան , Հայաստանի Հանրապետության մարզպետարաններ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>
---	------------------------------	---	---	------------------------------------

		<p>նաև հակահամաճարակային համալիր միջոցառումների իրականացման հարցերի շուրջ քննարկումներ, խորհրդակցություններ, վեր են հանված համաճարակաբանական հսկողության համակարգում առկա խնդիրները, մշակված են դրանց լուծման համար գործողությունների ծրագրեր</p>		
<p>2) Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների վարակի հսկողության ծրագրերում ներառել վիրուսային հեպատիտների, մասնավորապես՝ արտաընդերային ճանապարհով փոխանցվող, հարցերը</p>	<p>2015-2016 թվականներ</p>	<p>Համաճարակաբանական հսկողության համակարգի կատարելագործման նպատակով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների վարակի հսկողության ծրագրերում ներառված են վիրուսային հեպատիտների, մասնավորապես՝ արտաընդերային ճանապարհով փոխանցվող,</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Երևանի քաղաքապետարան , Հայաստանի Հանրապետության մարզպետարաններ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>

<p>3) Վիրուսային հեպատիտների յուրաքանչյուր ներհիվանդանոցային դեպք քննարկել վարակի հսկողության հանձնաժողովներում</p>	<p>2015-2020 թվականներ</p>	<p>անհրաժեշտ հարցերը</p> <p>Վիրուսային հեպատիտների յուրաքանչյուր ներհիվանդանոցային դեպք վարակի հսկողության հանձնաժողովներում քննարկված է, դեպքի վարման բացերը վեր են հանված և դրանց լուծման ուղղությամբ ներկայացված են առաջարկություններ և տրված են հանձնարարականներ</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Երևանի քաղաքապետարան , Հայաստանի Հանրապետության մարզպետարաններ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>
<p>4) Մշակել արտաընդերային ճանապարհով փոխանցվող վիրուսային հեպատիտների ներհիվանդանոցային վարակման համաճարակաբանական հսկողության և անվտանգ բժշկական միջամտությունների իրականացման ազգային ուղեցույցներ</p>	<p>2015 -2016 թվականներ</p>	<p>Արտաընդերային ճանապարհով փոխանցվող վիրուսային հեպատիտների ներհիվանդանոցային վարակման համաճարակաբանական հսկողության և բժշկական միջամտությունների իրականացման անվտանգության աստիճանի բարձրացման համար ազգային ուղեցույցները մշակված են</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>

<p>5) Զարգացնել ներարկումների անվտանգության քաղաքականությունը. բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում՝ ներառյալ ինքնարգելափակվող ներարկիչների կիրառման խրախուսումը</p>	<p>2015-2020 թվականներ</p>	<p>Վիրուսային հեպատիտների, հատկապես արտաընդերային ճանապարհով տարածվող, և ներհիվանդանոցային վարակների կանխարգելման, ներարկումների անվտանգությունը ապահովելու համար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում խրախուսված է է ինքնարգելափակվող ներարկիչների կիրառումը</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Երևանի քաղաքապետարան , Հայաստանի Հանրապետության մարզպետարաններ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>
<p>6) Մշակել և ներդնել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում ներարկումների հաշվառման մեթոդաբանություն</p>	<p>2015 թվական</p>	<p>Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում ներհիվանդանոցային վարակների, մասնավորապես՝ արտաընդերային ճանապարհով փոխանցվող վիրուսային հեպատիտների կանխարգելման և</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>

		վերահսկման համար իրականացված անհրաժեշտ ներարկումների հաշվառում է		
7) Իրականացնել արտաընդերային ճանապարհով փոխանցվող հեպատիտների ոչ բժշկական հիմնարկներում վարակման դեպքի քննարկում	2015-2020 թվականներ	Արտաընդերային ճանապարհով փոխանցվող հեպատիտների ոչ բժշկական հիմնարկներում վարակման դեպքերը քննարկվում են և հաղորդվում սահմանված կարգով	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում
8) Մասնակցել 2016-2020 թվականների իմունականխարգելման ազգային ծրագրի մշակմանը և հիմնավորել բուժաշխատողների ոչ ստացողների և հիվանդների որոշ խմբերի/հեմոֆիլիզ ստացողներ և այլն/ հեպատիտ Բ-ի դեմ պատվաստման իրականացումը այդ ծրագրում ներդնելու նպատակով	2015 թվական	Բուժաշխատողների ոչ ստացողների և հիվանդների որոշ խմբերի/հեմոֆիլիզ ստացողներ և այլն/ հեպատիտ Բ-ի դեմ պատվաստումներն ընդգրկված են 2016-2020 թվականների իմունականխարգելման ազգային ծրագրում	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում

III. ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

5. Արտաընդերային ճանապարհով փոխանցվող վիրուսային հեպատիտների լաբորատոր հսկողության կատարելագործում

1) Ստեղծել արտաընդերային ճանապարհով փոխանցվող վիրուսային հեպատիտների ռեֆերենս լաբորատորիա և ներդրել	2016 թվական	Հայաստանի Հանրապետության առողջապահության	Հայաստանի Հանրապետության առողջապահության	Պետական բյուջեով առողջապահության ոլորտին
---	-------------	--	--	--

<p>հեպատիտ Բ-ի և Ց-ի վիրուսների որակական և քանակական, ինչպես նաև գենատարբերակման, լաբորատոր հետազոտությունների մեթոդաբանություններ</p>		<p>Նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեֆերենս լաբորատորիայի բազայի վրա ստեղծված է արտաընդերային ճանապարհով փոխանցվող վիրուսային հեպատիտների ռեֆերենս լաբորատորիա, որ ներդրված են հեպատիտ Բ-ի և Ց-ի վիրուսների որակական, քանակական, գենատարբերակման լաբորատոր հետազոտությունների մեթոդաբանություններ</p>	<p>Նախարարություն</p>	<p>հատկացվող գումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից</p>
<p>2) Ապահովել լաբորատորիայի վերազինումն անհրաժեշտ սարքավորումներով և հագեցումը լաբորատոր նյութերով</p>	<p>2015-2020 թվականներ</p>	<p>Լաբորատորիան վերազինված և հագեցված է գործունեություն ծավալելու համար</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>	<p>Պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող գումարների շրջանակում,</p>

				ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից
3) Ապահովել հեպատիտների լաբորատոր ախտորոշման ուղղությամբ մասնագետների պատրաստվածության շարունակականությունը	2015-2020 թվականներ	Հեպատիտների լաբորատոր ախտորոշման ուղղությամբ մասնագետների պատրաստվածության շարունակականությունն ապահովված է	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող գումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից
4) Մշակել և ներդնել արտաընդերային ճանապարհով փոխանցվող վիրուսային հեպատիտների լաբորատոր ախտորոշման գործողությունների ստանդարտ ընթացակարգ	2015 թվական	Արտաընդերային ճանապարհով փոխանցվող վիրուսային հեպատիտների լաբորատոր ախտորոշումն իրականացված է ստանդարտացված մոտեցումների հիման վրա	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում

IV. ԱՐՏԱԸՆԴԵՐԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՓՈԽԱՆՑՎՈՂ ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏՆԵՐԻ ՎԱՂ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

6. Վիրուսային հեպատիտ Բ-ի և Ց-ի նկատմամբ լաբորատոր հետազոտությունների իրականացում ոչսկի քանակակազմի շրջանում.

<p>1) Որոշել ռիսկի քանակագմը՝ ընդգրկելով արյան և արյան պատրաստուկների հետ աշխատող, բոլոր արտաընդերային միջոցառումներ իրականացնող բուժանձնակազմ, արյուն և արյան պատրաստուկներ ստացող հիվանդներ, հեմոդիալիզի ենթարկվող հիվանդներ, իմուն համակարգի ընկճման կիրառումով բուժում ստացող հիվանդներ, հեպատիտով հիվանդների ընտանիքի անդամներ, և այլն</p>	<p>2015 թվական</p>	<p>Լաբորատոր հետազոտությունների նպատակային իրականացման համար որոշված է ռիսկի քանակագմը</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>
<p>2) Աշխատանքներ տանել արտաընդերային վիրուսային հեպատիտների առումով ռիսկի խմբերի շրջանում իրականացնելու լաբորատոր հետազոտություններ, դրանց շարունակական մոնիթորինգ, վերահսկողություն, վերլուծություններ՝ ապահովելով հետադարձ կապը</p>	<p>2015-2020 թվականներ</p>	<p>Արտաընդերային վիրուսային հեպատիտների վաղ հայտնաբերման համար ռիսկի խմբերի շրջանում իրականացված են լաբորատոր հետազոտություններ, դրանց շարունակական մոնիթորինգ, վերահսկողություն, վերլուծություններ՝ ապահովելով հետադարձ կապը</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>	<p>Պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող գումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից</p>
<p>3) Ապահովել ռիսկի քանակակազմի շրջանում ճշգրիտ հետազոտությունների իրականացումը պոլիմերազա շղթայական ռեակցիա (այսուհետ՝ ՊՇՌ) եղանակով և վերջիններիս մասին հաղորդումը սահմանված կարգով</p>	<p>2015-2020 թվականներ</p>	<p>Ռիսկի քանակակազմի շրջանում իրականացվում են ճշգրիտ հետազոտությունները և հաղորդվում սահմանված կարգով</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>	<p>Պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող գումարների շրջանակում, ինչպես նաև</p>

				Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից
4) Մշակել հողներին վիրուսային հեպատիտ Բ-ի և Ց-ի նկատմամբ միանվագ լաբորատոր հետազոտությունների գործողությունների ընթացակարգ և դրան համաձայն իրականացնել հողների շրջանում վիրուսային հեպատիտ Բ-ի և Ց-ի վարակվածության մոնիթորինգ	2015-2020 թվականներ	Նորածինների և վաղ մանկական հասակի երեխաների պաշտպանությունը վիրուսային հեպատիտ Բ-ից և Ց-ից ապահովելու համար հողներին վիրուսային հեպատիտ Բ-ի և Ց-ի նկատմամբ միանվագ լաբորատոր հետազոտությունների գործողությունների ընթացակարգի հիման վրա հողների շրջանում իրականացված է վիրուսային հեպատիտ Բ-ի և Ց-ի վարակվածության մոնիթորինգ	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող գումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից

Վ. ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏՆԵՐԻ՝ ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ ԱՐՏԱԸՆԴԵՐԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՓՈԽԱՆՑՎՈՂ, ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

7. Վիրուսային հեպատիտների կանխարգելման գործընթացում ընդգրկված կադրերի պատրաստման շարունակականության ապահովում

1) Մշակել ժամանակացույց և դրան համապատասխան պարբերաբար	2015-2020 թվականներ	Մշակված է ժամանակացույց և դրան	Հայաստանի Հանրապետության	Ֆինանսավորում չի պահանջվում
--	---------------------	--------------------------------	--------------------------	-----------------------------

<p>կազմակերպել աշխատանքային խորհրդակցություններ՝ համաճարակաբանների, վարակաբանների, առամնաբույժների, հեմոդիալիզի բաժանմունքների բժիշկների, նեոնատոլոգների, արյան ծառայության աշխատողների, մանկաբույժների, վիրաբույժների, ընտանեկան բժիշկների, գինեկոլոգների, թերապևտների և այլ մասնագետների մասնակցությամբ՝ վիրուսային հեպատիտ Բ-ի և Ց-ի կանխարգելման տեսական և գործնական հարցերի շուրջ</p>		<p>համապատասխան պարբերաբար կազմակերպված են աշխատանքային խորհրդակցություններ՝ բուժաշխատողների մասնակցությամբ՝ վիրուսային հեպատիտ Բ-ի և Ց-ի կանխարգելման տեսական և գործնական հարցերի շուրջ</p>	<p>առողջապահության նախարարություն</p>	
<p>2) Մշակել ներհիվանդանոցային ընդերային և արտաընդերային ճանապարհով փոխանցվող վիրուսային հեպատիտների համաճարակաբանական հսկողության, ինչպես նաև արտաընդերային ճանապարհով փոխանցվող վիրուսային հեպատիտների անվտանգ բժշկական միջամտությունների իրականացման ազգային ուղեցույցներ</p>	<p>2015-2016 թվականներ</p>	<p>Մշակված են ներհիվանդանոցային և արտաընդերային ճանապարհով փոխանցվող վիրուսային հեպատիտների համաճարակաբանական հսկողության, ինչպես նաև արտաընդերային ճանապարհով փոխանցվող վիրուսային հեպատիտների անվտանգ բժշկական միջամտությունների իրականացման ազգային ուղեցույցները</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>
<p>3) Մշակել և ներդնել բժշկական օգնություն և</p>	<p>2015</p>	<p>Բժշկական օգնություն և</p>	<p>Հայաստանի</p>	<p>Ֆինանսավորում չի</p>

սպասարկում կազմակերպություններում բուժաշխատողների համար վիրուսային հեպատիտներով հիվանդների վարման (վարակի հսկողության առումով) ուղեցույցներ	իրականացնող թվական	սպասարկում իրականացնող կազմակերպություններում, բուժաշխատողների կողմից վիրուսային հեպատիտներով հիվանդների վարման (վարակի հսկողության առումով) գործընթացը կանոնակարգված է	Հանրապետության առողջապահության նախարարություն	պահանջվում
--	-----------------------	--	---	------------

VI. ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏՆԵՐԻ ԱՌՈՒՄՈՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱՀԻԳԻԵՆԻԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

8. Բնակչության շրջանում իրազեկման աշխատանքների բարելավում և շարունակական ապահովում

1) Մշակել վիրուսային հեպատիտների կանխարգելման հարցի շուրջ քարոզչական նյութեր՝ հուշաթերթեր, պաստառներ և այլն	2015-2016 թվականներ	Բնակչությանը վիրուսային հեպատիտների և դրանց կանխարգելման մասին իրազեկվածությունը ապահովելու համար մշակված են վիրուսային հեպատիտների կանխարգելման հարցի շուրջ քարոզչական նյութեր՝ հուշաթերթեր, պաստառներ և այլն	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող գումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից
2) Մշակել ռիսկի խմբերի և ամբողջ բնակչության շրջանում հեպատիտների վերաբերյալ բժշկահիգիենիկ կրթության և առողջ ապրելակերպի քարոզչության ժամանակացույց և դրան համապատասխան իրականացնել բժշկահիգիենիկ կրթություն և	2015-2020 թվականներ	Ռիսկի խմբերի և ամբողջ բնակչության շրջանում հեպատիտների վերաբերյալ բժշկահիգիենիկ կրթություն և առողջ	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում

<p>առողջ ապրելակերպի քարոզչություն, տեղեկացնել վիրուսային հեպատիտների առումով վիճակագրական տվյալների մասին</p>		<p>ապրելակերպի քարոզչության ժամանակացույցին համապատասխան գործընթացն իրականացված է</p>		
<p>3) Վիրուսային հեպատիտների (մասնավորապես՝ արտաընդերային ճանապարհով փոխանցվող) բնագավառում բժշկահիգիենիկ գիտելիքների տարածման և առողջ ապրելակերպի քարոզչության գործընթացում համագործակցել միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ</p>	<p>2015-2020 թվականներ</p>	<p>Վիրուսային հեպատիտների (մասնավորապես՝ արտաընդերային ճանապարհով փոխանցվող) բնագավառում բժշկահիգիենիկ գիտելիքների տարածման և առողջ ապրելակերպի քարոզչության գործընթացն իրականացվում է միջազգային և հասարակական կազմակերպությունների համագործակցությամբ</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն,</p>	<p>Պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող գումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից</p>
<p>VII. Գործողությունների նպատակային ծրագրի իրականացման գործընթացի դիտարկում (մոնիթորինգ)</p>				
<p>9. Իրավիճակի դիտարկում, գնահատում, առաջարկների ձևավորում</p>				
<p>1) Իրավիճակի և դրա դիտարկման, գնահատման արդյունքում առաջարկությունների մասին տարեկան զեկույցի պատրաստում և հրապարակում</p>	<p>2015-2020 թվականներ</p>	<p>Նպատակային ծրագրի գործադրման ընթացիկ իրավիճակի բնորոշման, փոփոխությունների</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>

		գնահատման և աշխատանքի ճշգրտման նպատակով իրավիճակի և դրան դիտարկման, գնահատման արդյունքում առաջարկությունների մասին տարեկան զեկույցը հրապարակված է		
--	--	--	--	--